

Այդ տեսակէտից մեր հրատարակած ճառըն էլ բացառութիւն պիտի չկազմէր. բայց ինչքան որ մենք գատել կարող ենք՝ նորա մէջ նախնական ժամանակի ոճ է նկատուում և այլի է ընկնում նորա նմանութիւնը « Ի գիշերի խնդրեցի » բառերով սկսուող այն հատուածի հետ, որ Աքանչելագործի ժամանակակից Հիպպոլիտին է ընծայուում և նոյնպէս հայերէն ձեռագիրներից առնուելով հրատարակուած է վերոյիշեալ ժողովածուների մէջ: * Այս ճառի մէջ մի ուշադրութեան արժանի կէտ էլ 2 Մարիամների անուան կցած բացատրութիւնն է. հետաքրքիր այն պատճառով, որ միւս Մարիամի ով լինելը արգարե վէճի առարկայ է մինչև այժմ:

Աքանչելագործի անուամբ մենք մի ուրիշ ճառ ևս գտել ենք, որ, ինչքան ստուգեցինք. դեռ մինչև այժմ ոչ մի տեղ յայտնի չէ, բայց որ բաւական ընդարձակ լինելով այս անգամ հրատարակութեան անյարմար գտնուեցան: Լոյս տեսնող 3 հատուածները արտագրուել են Մայր ցուցակի 920 հ. ճառընտրից և մէկը նոցանից համեմատուելով հ. 923 օրինակի հետ, մէջ է բերուած նորանից ունեցած տարբերութիւններով մէկ տեղ: 2. Չարպանալեանի վկայութեան համաձայն ** նոքա յայտնի են եղել արդէն Մխիթարեաններին, բայց դեռ ևս ապագրած չին: Միայն նորա յիշած նգովները մեզ մօտ գտնուածից այնու տարբեր են, որ այնտեղ 12 են թուով, ինչպէս և յունարէն բրնագրի մէջ, իսկ այստեղ 5 միայն: Գուցէ վերջինս ասորերէնից է թարգմանուած, ուր նոյնպէս նգովները լրիւ չին, *** և այդ է երևի պատճառը, որ նոքա բառերով ևս տարբերուում են 2. Չարպանալեանի յիշածից:

Կ. Վ.


 ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.
 Ա.

* Չատարկութիւն և վկայականութիւն Ապոլոնիոսի և այլ յիշտու կարանք նախնի քրիստոնէութեան:

* Ոչքան յիշում ենք սորա տալազրուած օրինակը աղաւաղեալ եւ մուծ տեղեր ունի, որ մեր մատենադարանի ձեռագիրներով պարզուում են, բայց որովհետեւ համեմատուելու մընոց չունենք, աւելորդ համարեցինք առ այժմ մեր օրինակը տալագրել:

** Մատենադարան հայկական թարգմանութեանց, երես 577. Վենետիկ 1889:

*** Harnack. l. c.

թեան». Ք. Կ յիշիր. — Արարատի անցեալ համարներում չկարողացանք մեր ցանկութեան համեմատ այս կարևոր գրուածքի մասին ծանօթութիւն տալ, բայց ուշ չենք համարում այժմ գոնէ մի քանի խօսք ասել՝ ուշադրութիւն հրահրելով մանաւանդ այն հանգամանքի վերայ, թէ մեր հին գրականութեան մէջ ինչպիսի թանկագին յիշատակարաններ կան, նաև այնպիսի նւթերի վերաբերեալ, որ մեզ ամենևին հետաքրքիր չեն թուում:

Կոնիքիի գիրքը պարունակում է իւր մէջ, ինչպէս յիշուել է, բացի Ապոլոնիոսի ջատագովութիւնից և վկայարանութիւնից այլևս 10 վկայարանութիւններ՝ Պօղոս և Թեկղէ, ս. Փոկաս, ս. Պօղիքոս, ս. Սեզինէ, ս. Կոզրատիոս, ս. Թէոզորոս, ս. Թաղզէոս, ս. Յեզոիրուզգ, ս. Կալիստրատոս և ս. Գեմետրիոս, բոլորն էլ հայերէնից թարգմանած: * Հեղինակն իւր յառաջբանի սկզբում յայտնում է, որ այս թարգմանութեան նպատակն եղել է « առ ընթացողին մի շարք կենդանի պատկերներ, մի ակնարկ քրիստոնէութեան գործնական կեանքի վերայ՝ իւր պատմութեան առաջին 3 դարերում: 2նայելով որ սոցա հայերէնը փոխադրութիւն է յունարէնից կամ ասորերէնից և գտնուում է մեծ մասամբ նաև լատիներէն լեզուով « Առանց պատճառի չէ, ասում է նա, որ ես նախագասեցի հայերէնից և ո՛չ լատիներէնից կամ յունարէնից թարգմանել, և պատճառն այն է, որ առ հասարակ հին հայերէն թարգմանութիւնները պատմութեան աւելի նախնական ձևն են պահել, քան լատին, յոյն կամ ասորի ձեռագիրները: Այս անգամ նա ընտրել է այնպիսի վկայարանութիւններ, որ կամ դեռ ուրիշ լեզուներով չեն գտնուած կամ մի խոշոր տարբերութիւն և առաւելութիւն ունին գտնուածից: Առաջին կարգին է պատկանում և ինչպէս գրքի վերնագիրը ցոյց է տալիս ամենակարևոր տեղն է բըռնում Ապոլոնիոսի ջատագովութիւնը, 2նայելով որ արդէն քսան տարի առաջ այդ գրուածքը Մխիթարեանների հրատարակութեամբ լոյս էր տեսել, այնու ամենայնիւ ոչ որ այդքան ժամանակ չէր նկատուել, որ դա քրիստոնէութեան ամենահին յիշատակարաններից է, Կոնիքիի հրատարակեց առաջին անգամ նորա անգլիերէն թարգմանութիւնը « Պուարգիան » թերթի մէջ 1894 թ. ին, որ և շատ շուտով գիտնականների ուշադրութիւնը գրաւեց:

Հագիւ մի ամիս անցած Բերլինի աստուածաբանութեան պրոֆեսոր և Ակադիմիայի անդամ հռչակաւոր պատմագէտ Հառնակը Ակադեմիային ներկայացրեց նորա գերմաներէն թարգմանութիւնը

* Վարդ եւ վկայարանութիւնը սրբոց. Ղենետիկ, 1874:

մի զեկուցումով ուր նա ասում է. « Սա յիրաւի քրիստոնէութեան ամենապատուական ջատագովութիւնն է, որ հին ժամանակից մեր ձեռքը հասել է. Ապողոնիոսի մասին մի համառօտ տեղեկութիւն գտնուում էր մինչև այդ ժամանակ միայն Եւսեբիոսի Եկեղեցական պատմութեան մէջ (Գիրք Ե. Գլուխ 21): որ ունէր մի քանի մութ և վիճելի կէտեր. Կոնիքրի գիւտը նպաստում է բաւականաչափ պարզաբանելու մութ մնացածը. «Կետք է յիշել այստեղ, որ Եւսեբիոս բացի միւս գրուածքներից ունէր և մի հարուստ ժողովածու հին վկայարանութիւնների, որից շատ է օգտուել իւր պատմութիւնը գրելիս) բայց որ մեր ձեռքը չէ հասել, Հայկական ճառքներից մէջ շատ կան վկայարանութիւններ, որոնք վերնագրին նայած եկեղեցական պատմութիւնից պէտք է արտագրած լինէին, բայց նորա մէջ չեն գտնուում: Այստեղից կարելի էր եզրակացնել, թէ Եւսեբիոսի վկայարանութեանց ժողովածուն ծանօթ էր մեր հայրերին, որև նորա եկեղեցական պատմութեան շարունակութիւն էին համարում: Կուցէ այդտեղից է առնուած նաև Ապողոնիոսի ջատագովութիւնը:

Կոնիքրի թարգմանած միւս վկայարանութիւնների մասին առանձին առանձին խօսել՝ մեզ շատ հեռու կտանէր:

Բ.

Առթից օգուտ ենք քաղում սակայն յիշելու այստեղ պրոֆ. Կոնիքրի մի ուրիշ կարևոր գիւտը, որ նոյն պէս շատ զբաղեցրեց անցեալ տարի եւրոպացի մասնագէտներին. — Մայր Աթոռոյս մատենադարանի ամենշնանաւոր ձեռագիրներից մէկը՝ Հայոց ՆԼԸ (Փրկչ. 989) թուականին «ի ստոյգ և ի հին օրինակաց» գրած մագաղաթեայ երկամզգիր մի աւետարան՝ որի փառահեղ փղոսկրեայ կազմն արդէն վաղուց բանասէրների ուշը գրաւել էր, * Մարկոսի աւետարանի վերջում՝ 9—20 հ. «Յարուցեալ Յիսուս»... յաւելուածից առաջ, ունի կարմիր գրերով «Աբիւտիւ երէց» վերնագիրը: Այս յաւելուածը հայկական թարգմանութեան հին ձեռագիրների մէջ առհասարակ պակաս է, իսկ ուր մէջ է բերած, բաժան է միշտ նախընթացից և ունի առանձին վերնագիր՝ «Աւետարան ըստ Մարկոսի»: Արովհետև բնագրի և ուրիշ թարգմանութեանց մէջ, գործածական օրինակներում, անմիջական շարունակութիւնն է կազմում սա Մարկոսի աւետարանի՝ այդպէս էլ իբրև Մարկոսի գործ նկատուել և գործ է դրուել եկեղեցու մէջ: Բայց մեր ժամանակի բոլոր քննադատները հերքում են նորա վաւերականութիւնը:

* Արքիւն անգամ մանրամասն նկարագրուած է սա 1892 թ. ին մի առանձին գորով Ստրեզոֆսկի գիտնականից:

Արգ. Կոնիքրի 1891 թ.-ին ս. Էջմիածնում գտնուած ժամանակ նկատել է մեր ձեռագրի մէջ «Աբիւտիւ երէց» վերնագիրը և 1893 թ.-ին Expositor թերթի հոկտեմբեր 7 հ. ում մի յօդուածով ծանօթացրել է այս գիւտը գիտնական աշխարհին. * Նա աշխատում է պայցուցանել, և այդ կէտում ուրիշ շատերը համաձայն են նորա հետ, որ այստեղ յիշուած Աբիւտիւ նոյնն է, ինչ որ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան մէջ Առաքեալների և Քրիստոսի անմիջական աշակերտների շարքում յիշուած Աբիւտիւնը, որից շատ բան է ուսել Պապիաս՝ իւր գրուածներով նշանաւոր և Բ. դարու սկզբում Եփեսոսի մէջ գործող Առաքելական հայրերից մէկը:

Եւսեբիոսի և այլ ցուցմանց վերայ հիմնուած Կոնիքրի այն եզրակացութեանն է դալիս, թէ Արիստոն կարող էր Քրիստոսի կենաց մի պատմութիւն գրած լինել, որից իւր մի հետևողը վերցրել լրացրել է «զի երկնչէին» բառերով յանկարծակի ընդհատուող Մարկոսի աւետարանը: Այս կտորի հայերէն թարգմանութիւնը նորա կարծիքով ասորերէնից է եղել և ուրեմն հաւանականաբար մի ուրիշ մնացորդ է ս. Կրքի այն հին թարգմանութեան, որի մնացորդը համարում է պրոֆ. Քետտէր մեր ձեռագիրների մէջ մնացած նոր Կտակարանի մի ուրիշ անվաւերական կտոր՝ Պօղոս Առաքեալի առ Կորնթացիս Կ. թուղթը: *

Աւելորդ չեմ համարում յիշել ի դէպ, որ Լոնդոնի Իրիտանական թանգարանի մէջ օր. 2681 համարաւ հայերէն, ՋԼԿ թ.-ին գրուած, աւետարանը էջ 288 Յովհաննու աւետարանի վերջում, «Աւետարան ըստ Յովհաննու» խորագրի տակ առանձին, մէջ բերելով Շնացեալ կնոջ պատմութիւնը աւելացնում է. «Ձայս յիշատակ բանի ընկալաւ եկեղեցի յԱսորոց աւետարանէ, բանիւ Պապիասայ ում մն» Յովհաննու աշակերտի, որև յետոյ հերձուած խօսեցաւ և խոտեցաւ: Եւ է կարգ բանին յ86 համարն զկնի այնմ բանի, որ ասէ. Քննեա և տես, զի մարդարէ ի Գալիլէէ ոչ յառնէ, Եւսեբի է ասացեալս: Թէպէտ այս նկատողութիւնը յիրաւի Եւսեբիոսից առած է (Եկեղեցական պատմութիւն, Գիրք Գ. 39, 17), բայց ուշագրութեան արժանի է գոնէ այն տեսակէտից, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս մեր հայրերը քննադատական աչքով են նայել անցեալի յիշատակարանների վերայ և խնամքով պահպանել իրենց ձեռք ընկած պատմական ցուցումները: Շնա-

* Այս յօդ. - ի մասին ընդարձակ տեղեկութիւն տես «Առաջ Ամսօրեայ» 1895 մարտ:

** Der apokryphe dritte Korintherbrief, — Dr P. Vetter. Wien. 1894:

ցեալ կնոջ պատմութիւնը, որ նոյնպէս աւետարանի անվաւերական կտորներից է, ինչպէս յայտնի է չկայ մեր հին ձեռագիրների մէջ և նորերի մէջ Յովհաննու աւետարանի վերջն է բերած միշտ: Գործածական տպագրութիւնները և նորագոյն ձեռագիրները՝ լատիներէնի ազգեցութեամբ այս հատուածը դնում են Ա. գլխի սկզբում:

Կ. Վ.



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆՈՂՈՒՆՆԵՐ

1. ԿԱՌՈՒԻԿ ԵԿԵՂԵՅԻ.

Եկեղեցիների միութեան խնդրի վերաբերութեամբ Աատիկանում կարծիքներն սկսել են տարբերուիլ, ինչպէս լրագիրներն հաւատացնում են, այդ խնդրի իրագործուելուն բացի պայից ուրիշ ոչ որ չէ հաւատում մինչև անգամ պնդողներ կան, որ պայի այդ ջերմ ցանկութեան հակառակ են բարձր եկեղեցականներից շատերը: 2ր նայելով այս հակառակութեան պայը հետզհետէ իրագործում է «...» ժողովի վճիռները և նորանոր հնարքներ է մտածում ս. Աւտրոսի փարախը լայնացնելու:

Ինչպէս տեղեկանում ենք կաթողիկ «Italie» թերթից, Կ. Պոլսում հիմնուելիք հոգևոր դպրոցը պէտք է մի տեսակ հոգևոր նախնային լինի, որ հնար ունենան յունածէս լատին քահանայք ներքին ու արտաքին գիտութիւններն ուսումնասիրելու: Այս համալսարանին կից պիտի պահպանուի և մի միջնակարգ հոգևոր դպրոց (սեմինար) իրրե նախակրթարան:

Այս հոգևոր դպրոցին և համալսարանին կից Հռոմի քահանայապետը մտադիր է և մի փառաւոր յայտնելու կառուցանել, որ յունական ծիսով պիտի պաշտօն կատարուի որպէս զի արեւելցուն այնքան սիրելի արտաքին ձեւերի փառայելութեամբ գրաւուին շատերը:

Հռոմից պայն առաջարկել է Ռայմնի Լանժանիէ արքեպիսկոպոսին մի ֆրանսերէն թերթի հրատարակել միութեան խնդրի քարոզութեան համար: Այս առթիւ ռուս հոգևորականներից մէկը ճիշդ նկատու է, թէ արգարեւ պայն առաւել յաջող միտք կարող չէր յղանայ, որովհետև ոչ մի տեղ միութեան խնդիրն այնքան ոգևորուած պաշտպաններ կարող չէ ունենալ, որքան ֆրանսիական հոգևորականների մէջ և դարձեալ թէ արեւելեան

քրիստոնէից (յոյների, ռուսների) սերբերի և մանաւանդ ռումենացիների) համար ամենայն ինչ որ ֆրանսիայիցն է գալիս, գրաւել է:

Միութեան խնդրի ամենից եռանդուն քարոզիչները գործում են Ասորիքում: Պաղեստինէում և Արարիայում ուր յունադաւան ժողովուրդը տըզիտութեան խաւարումն է խարխափում: Այս քարոզութեան առաջն առնելու համար Պաղեստինէի ռուսական ընկերութիւնը մի արարերէն տետրակ է հրատարակել, ուր պայպական միութեան առաջարկները միամի առաջ են բերուած և հերքուած:

— Յիսուսեան կրօնաւորների թիւը մի ամբողջ բանակ է կազմում, անցեալ տարուան վիճակագրութիւնից երևում է, որ այդ միաբանութիւնը 14,000 անդամ ունի այժմ:

— Մինչդեռ Հռոմից պայն աշխատում է արեւելեան քրիստոնեաներին իւր իշխանութեան տակ առնել, արեւմուտքում հետզհետէ կորցնում է իւր ազգեցութիւնը: Անցեալ տարի ֆրանսիական կառավարութիւնը հարկի ենթարկել կամեցաւ հասարակական հաստատութիւններից և «...» հիմնարկութիւնները: Մասնականութիւնը, որ հակառակ է ոչ միայն կաթողիկութեան, այլ նաև քրիստոնէութեան առհասարակ, ֆրանսիայում 285 համայնք ունի, որ մտաւարապէս կուենայ 28,500 անդամ: Այդ ընկերութեան անդամ են գրուում բացառապէս կրթուած դասակարգից, ուստի և վերոյիշեալ թիւը մեծ տոկոս է իսկապէս: ֆրանսիական կառավարութեան առաջաւոր անդամները մասոններ են:

— Փարիզի եկեղեցիներում վերջերս շփոթն ու դայթաղութեան դէպքերը բազմանում են: Մեծի պահոց օրերին Կլինեանկուրի ս. Աստուածածնի եկեղեցում յայտնի քարոզիչ Հարնիէն քարոզում էր «անառակ որդու» մասին: Շատ մեծ էր ունկնդիրների բազմութիւնը, որոնք ամենայն հանգրստութեամբ մինչև վերջը լսեցին, սակայն երբ քարոզիչը խօսքը դարձրեց նորագոյն հասարակական «անառակ որդոց» վերայ և յորդորեց յետ դառնալ հայրենի տունը և ապաշխարել, այնպիսի շփոթ և աղմուկ բարձրացաւ եկեղեցում, որ հնար եղաւ միայն ուստիկանութեան միջամտութիւնով հանգստացնել:

— Աւոն ԺԳ. պայը իւր 17-ամեայ քահանայապետութեան ընթացքում 100 ծիրանաւոր է թաղել, որոնցից 90-ին ինքն է այդ աստիճանը տուել: Աշխարհիս երեսին եղած բոլոր ծիրանաւորներից մեծագոյն մասը իտալացիք են (63 հոգուց 38), ինչպէս ենթադրում են Աւոն ԺԳ-ի յաջորդն էլ այդ